


Ս. ՅԱԿՈԲ

Ս. Յակոբայ Տաճարի գաւիթի ծնփերը տարիներէ ի վեր կը կտրօտէին հիմնական նորոգութեան: Այս տարի Պատրիարք Արքագանը որոշեց որ հիմնապէս նորոգուի Ս. Յակոբի գաւիթը, ոչ միայն ծեփուած մասը, այլեւ սալայատակը եւ երկաթեայ ճաղերը:

Մասնագէտ ճարտարապետներու եւ հնագէտներու կարծիքին հիման վրայ, վար առնուեցան հին ծեփերը, քննելու համար հին պատին քարերուն վիճակը: Մերկացուած սկզբնական պատին քարերը ի յայտ եկան չափազանց քայքայուած վիճակի մէջ, ինչ որ ստիպեց ճարտարապետները որոշելու որ նոյն տեսակի սակայն նոր քարերով ծածկելի հին պատը:

Երեք ամիսներու աշխատանքէ ետք, այսօր, Ս. Յակոբայ փառաւոր Տաճարին գաւիթը զգեցած է արժանավայել կերպարանք մը: Սալայատակը ծածկուած է սրբատաշ կարմիր քարերով: Ծաղերը, որոնք կը բաժնեն Եկեղեցւոյ գաւիթը արտաքին բաժէն, նորոգուած են եւ մաս մըն ալ ամբողջութեամբ նոր շինուած: Իսկ Եկեղեցւոյ




Ս. Յակոբայ նորոգուած գաւիթը՝ պիտուած հաւուհէն:

մուտքի պատը ամբողջութեամբ ծածկուած է ճերմակ սրբատաշ քարով, որուն վրայ կը բացուին երկու դուռները եւ երկու փոքր խորաններ, մին՝ Ս. Նիկողայոսի եւ միւսը՝ Ս. Գէորգի անունով: Աւագ դուռին եւ խորաններուն շուրջը՝ զարդարուած են յախճապակեայ (լինի) քարերով, գործ՝ բնիկ Բէթթիանիացի Տիարք Ն. Պալեան եւ Մ. Գարապակեան վարպետներու վրձինին եւ արուեստին:

Ս. Յակոբայ գաւիթին նորոգութեան ծախսի մէկ մասը հոգացին Ամերիկահայ Պր. Արմէն եւ իր քոյրը Լիւսիա, ի յիշատակ իրենց հօր՝ Գարեգին Աւետիսեանի: Իսկ յախճապակիի Թանկագին գործը նուիրեցին զայն պատրաստող վարպետները, ի յիշատակ Պալեան եւ Գարապաշեան գերդաստաններու ննջեցեալներուն: Այսպէսով, Ս. Յակոբեանց հոյակապ Տաճարը, որ ոչ միայն հայերուս, այլեւ ամբողջ երուսաղէմի պարծանքն է, ունեցաւ արժանավայել մուտք մը:



Ս. Իսլամի հարստության գույքը՝ գիստանի հիւսիսային թաղամասը:



Ս. Յակոբի կոյնիկները: